

4. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԵՎ

ԾԱՎԱԼՆԵՐԸ

Ուսումնասիրությունների տեղամասը գտնվում է Լեռնաջրի վարչական շրջանում և զբաղեցնում է մոտ 50հա մակերեսով տարածք, որը գտնվում է համանուն բնակավայրից մոտ 6կմ դեպի հարավ-արևելք (Հավելված 1):

Ներկայացվող Լեռնաջրի գրանտդիորիտների հանքերնակման հայցվող տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը կազմվել է հաշվի առնելով տեղամասի երկրաբանական կառուցվածքը, մորֆոլոգիական առանձնահատկությունները, ուսումնասիրությունների տարածքի չափերը, ուսումնասիրվող տեղամասի սահմաններում գրանտդիորիտների հաստվածքի սպասվող հզորությունը, տեղամասի հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական պայմանները, ինչպես նաև տարածքի լեռնատեխնիկական պայմանները: Երկրաբանական ուսումնասիրությունների աշխատանքային ծրագրի կազմման նպատակով հաշվի են առնվել նաև նախորդ ուսումնասիրողների կողմից Հալավարի գրանտդիորիտային ինտրուզիվ մարմինների վերաբերյալ ֆոնդային թիվ 3333 հաշվետվությամբ ամփոփված աշխատանքների մեթոդական առանձնահատկությունները ու արդյունքները: Ուսումնասիրությունների ծրագիրը կազմվել է ՀՀ ՏԿԵ նախարարի 2021թ. օգոստոսի 11-ի թիվ 06-Ն հրամանով ամրագրված «**Չինարարական եվ երեսապատման քարերի հանքավայրերի դասակարգման կիրառման հրահանգի**» ցուցումների, ինչպես նաև առաջնորդվելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի ապրիլի 13-ի թիվ 9-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Ելնելով հետախուզման համար հատկացված տարածքի չափերից, երկրաբանական պարզ կառուցվածքից, լեռնագրական պայմաններից և ֆոնդային նյութերի ուսումնասիրություններից՝ տեղամասի հետախուզումը նախատեսվել է իրականացնել տոպոգրաֆիական հանութագրման, երկրաբանական երթուղիների անցման և երկրաբանական քարտեզագրման միջոցով, բնական մերկացումների նմուշարկման, հետախուզահորերի անցման և սյունակային հորատանցքերի հորատման միջոցով:

Ըստ երկրաբանական նկարագրության՝ ուսումնասիրությունների հայցվող տեղամասն իրենից ներկայացնում է գրանտդիորիտների մակերեսային շերտաձև մարմին՝ մեղմաթեք տեղադրումով, թույլ փոփոխվող հզորությամբ և որակական հատկանիշներով: Այդ իսկ պատճառով, համաձայն «Բնական Չինարարական և երեսապատման քարերի ու դրանցից ստացվող իրերի և նյութերի հանքավայրերի նկատմամբ պաշարների դասակարգման հրահանգի»՝ Լեռնաջրի գրանտդիորիտների հանքերնակման տեղամասին կարելի է վերագրել որպես բարդության 1բ խումբ, որոնց հետախուզման ժամանակ հետախուզափորվածքների ցանցերի խտության նկատմամբ ներկայացվող պահանջները բերված են ստորև.

Հանքավայրերը			Փորվածքների միջև հեռավորությունները (մ)՝ պաշարների կարգերի ստորաբաժանման համար		
Խմբեր	Ենթախմբերը	Երկրաբանական կառուցվածքի հայտանիշները	A	B	C ₁
1	1ա	Մագմայական ապարների զանգվածաձև հանքակուտակներ՝ համասեռ կազմով, կայուն ֆիզիկամեխանիկական հատկություններով, չխախտված կամ թույլ խախտված տեղադիրքով	200-300	300-400	400-600
	1բ	Հորիզոնական կամ սակավաթեք տեղադրմամբ շերտաձև մարմիններ՝ տեկտոնական գործընթացներով չխախտված կամ թույլ խախտված	100-200	200-300	300-400
	1գ	Միաթեք տեղադրված, զառիթափ կամ ծալքավորված շերտեր և շերտաձև մարմիններ՝ կառուցվածքով, հզորությամբ և հումքի որակով կայուն, թույլ արտահայտված խզվածքային տեկտոնիկայով	Ըստ տարածման		
			50-100	100-200	200-300
2	-	Ոսպնյակաձև և շերտաձև հանքակուտակներ, շտոկներ, դայկաներ, հանքերակներ՝ հումքի ոչ կայուն որակական ցուցանիշներով և ինտենսիվ խզվածքային տեկտոնիկայով կամ կարստառաջացման գործընթացներով	-	50-100	100-200

«ՀՄԿԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված աշխատանքային ծրագրով, նախատեսված է Լեռնաջրի գրանոդիորիտների հանքերևակման տեղամասի ուսումնասիրությունները կատարել հետևյալ փուլերով.

1. 1:1000 մասշտաբով երկրաբանական և տոպոգրաֆիական քարտեզագրման աշխատանքներ,
2. Բնական մերկացումների նմուշարկում /5նմուշ/ և հետախուզահորերի անցում /6 հետախուզահոր/,
3. Սյունակային հորատանցքերի հորատում թվով 10 հորատակետերում, 25մ միջին խորությամբ:

Ուսումնասիրությունների ընթացքում բոլոր տիպի հետախուզական լեռնային փորվածքները ենթարկվելու են մանրամասն երկրաբանական փաստագրման և նմուշարկման:

Վերցված բոլոր նմուշները ենթարկվելու են լաբորատոր հետազոտությունների՝ գրանիտների ֆիզիկամեխանիկական հատկությունների որոշման, ինչպես նաև քիմիական և պետրոգրաֆիական կազմի ուսումնասիրման նպատակով:

